Co-funded by the European Union

Supported by: Federal Ministry for the Environment, Nature Conservation, Nuclear Safety and Consumer Protection — based on a decision of the German Bundestag

IKI INTERNATIONAL CLIMATE INITIATIVE

Implemented by giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

OECD

ՀՀ ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾԱՅՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Invitation to submit the requests for interest (Consulting services - organization selection)

October 28, 2025

Country: **Republic of Armenia**
Project name: **"Promoting Green Deal Readiness in the Eastern Partnership Countries (ProGRess)"; "Tashir – Climate Bridge"**

GIZ grant no. 81320025

Name of the contract: **Investigation of the condition of the urban bridge crossing over the Tashir River in Tashir city;**

Package number: ***GIZ/ESF/CS/CQS - 2025/001***

to whom it may concern:

1. The Energy Saving Foundation has received a grant from the German Agency for International Cooperation (GIZ) under the program "Promoting Green Deal Readiness in the Eastern Partnership Countries (ProGRess)", co-financed by the Federal Ministry for the Environment, Nature Conservation and Nuclear Safety of Germany and the European Commission, to cover the expenses of the "Tashir – Climate Bridge" project, and a portion of these funds is intended to be allocated for the procurement of the **Investigation of the condition of the urban bridge crossing over the Tashir River in Tashir city**.
2. The Energy Saving Foundation is now inviting eligible Consultants to submit tenders for the **Investigation of the condition of the urban bridge crossing over the Tashir River in Tashir city**.
3. Interested eligible Consultants may obtain additional information at the following address: Energy Saving Foundation, RA, Yerevan, 26/1 Vazgen Sargsyan Ave., Erebuni Business Center,

Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր (Խորհրդատվական ծառայություններ-կազմակերպության ընտրություն)

28 հոկտեմբերի 2025թ

Երկիր՝ **Հայաստանի Հանրապետություն**
Ծրագրի անվանումը՝ **«Արևելյան գործընկերության երկրներում Կանաչ համաձայնագրի իրագործման պատրաստվածության խթանում» (ProGRess) ծրագրի շրջանակներում, «Տաշիր – կլիմայական կամուրջ»**

ԳՄՀԸ/GIZ դրամաշնորհի No. 81320025

Պայմանագրի անվանումը՝ **ք.Տաշիրում Տաշիր գետի վրա քաղաքային կամրջային անցման վիճակի հետազննում;**

Փաթեթի համարը՝ ***GIZ/ESF/CS/CQS - 2025/001***

Հոտաքրքրված և որակավորված հայտատուներին

1. Էներգախնայողության աջակցման հիմնադրամը ԳՄՀԸ/GIZ-ից ստացել է դրամաշնորհ, **«Արևելյան գործընկերության երկրներում Կանաչ համաձայնագրի իրագործման պատրաստվածության խթանում» (ProGRess) «Տաշիր – կլիմայական կամուրջ»** ծրագրի ծախսերը հոգալու նպատակով և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել ***No. GIZ/ESF/CS/CQS - 2025/001*** պայմանագրի շրջանակներում **ք.Տաշիրում Տաշիր գետի վրա քաղաքային կամրջային անցման վիճակի հետազննում** խորհրդատվական ծառայությունների վճարումները կատարելու համար:
2. Էներգախնայողության աջակցման հիմնադրամը այժմ հրավիրում է իրավասու հայտատուներին **Հետաքրքրության հայտեր** ներկայացնել **ք.Տաշիրում Տաշիր գետի վրա քաղաքային կամրջային անցման վիճակի հետազննում** աշխատանքների իրականացման համար:
3. Հետաքրքրված իրավասու հայտատուները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ հետևյալ հասցեով. Էներգախնայողության

4th floor, room 414, Artur Grigoryan, e-mail: Email: artgrigoryan@yahoo.com. Questions on tender documents can be clarified at the above-mentioned address, during working hours from 09.00 to 18.00.

4. Hereby, the Energy Saving Foundation ("Client") invites eligible consulting organizations ("Consultants") to submit requests of interest regarding the provision of below services. Interested Consultants must submit information on the required qualifications and relevant experience (information on the organization, experience/description of providing similar services, license to carry out technical supervision, state registration certificate, contact information of the organization, etc.), in order to provide the specified services. Attached are: Annex A: Terms of Reference and Annex B: Consultant's Experience Table.

5. Qualification criteria are:

- Consultant's general work experience /years/ in the field of Investigation of the structures - 10 points;
- Consultant's general work experience / number of implemented contracts / in the field of Investigation of the structures during the last 5 years - 30 points;
- Implementation of similar contracts during the last 5 years, within which the organization has implemented technical investigation of at least 3 (three) bridges (passage, overpass) - 60 points.

6. The procurement will be carried out in accordance with the procurement procedure of the World

Հիմնադրամ, ՀՀ, ք. Երևան, 26/1 Վազգեն Սարգսյան պող., Էրեբունի բիզնես կենտրոն 4-րդ հարկ, 414 սենյակ, Արթուր Գրիգորյան, էլ. փոստ՝ artgrigoryan@yahoo.com: Մրցույթային փաստաթղթերի մասին հարցերը կարող են պարզաբանվել վերոնշյալ հասցեով, աշխատանքային ժամերի ընթացքում՝ 09.00-ից մինչև 18.00:

4. Սույնով Էներգախնայողության Աջակցման Հիմնադրամը («Պատվիրատու») հրավիրում է իրավասու խորհրդատվական կազմակերպություններին («Խորհրդատուներ») ներկայացնել հետաքրքրության հայտեր ստորև նշված ծառայությունների մատուցման վերաբերյալ: Նշված ծառայությունները տրամադրելու նպատակով շահագրգիռ Խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկատվություն պահանջվող որակավորման և համապատասխան փորձի վերաբերյալ (կազմակերպության մասին տեղեկատվություն, նմանատիպ ծառայությունների տրամադրման փորձ/նկարագրություն, լիցենզիա, պետական գրանցման վկայական, կազմակերպության կոնտակտային տվյալները և այլն): **Կից կարող եք տեսնել Հավելված Ա՝ Տեխնիկական առաջադրանքը և Հավելված Բ՝ Խորհրդատուի փորձի ներկայացման աղյուսակը:**

5. Որակավորման չափանիշներն են՝

- Խորհրդատուի ընդհանուր աշխատանքային փորձը /տարիները/ կառույցների հետազննման աշխատանքների ոլորտում - 10 միավոր;
- Խորհրդատուի ընդհանուր աշխատանքային փորձը /իրականացված պայմանագրերի քանակը/ կառույցների հետազննման աշխատանքների ոլորտում, վերջին 5 տարիների ընթացքում – 30 միավոր;
- Վերջին 5 տարիների ընթացքում նմանատիպ պայմանագրերի իրականացում, որոնց շրջանակներում կազմակերպությունը իրականացրել է առնվազն 3 կամրջի (ուղեանցի, էստակադայի) տեխնիկական հետազննման աշխատանքներ – 60 միավոր:

6. Գնումն իրականացվելու է Համաշխարհային Բանկի գնումների ընթացակարգով,

Bank, using the "Company's Qualification-based selection" (CQS) method.

7. Consulting companies can cooperate with each other, in order to improve their qualifications. In this case, it is necessary to clearly indicate the form of cooperation: Joint Venture (JV) and/or sub-consultant. During the entire implementation of the contract, all members of the JV have joint responsibility, in case of being selected.

8. For more information, feel free to contact the address below on working days from 09:00 to 18:00. Below are the contact details.

9. Request for interest must be submitted in **Armenian**, electronically, to the address below, no later than **November 11, 2025, at 3:00 p.m**. The Expression for interest must clearly state **Investigation of the condition of the urban bridge crossing over the Tashir River in Tashir city**; **GIZ/ESF/CS/CQS - 2025/001**

The above-mentioned address is:
Client: Energy Saving Foundation

Authorized representative: Ms. Astghine Pasoyan, Executive Director
Address: RA, c. Yerevan, 26/1 Vazgen Sargsyan Ave., Erebuni Business Center 4th floor, room 414

Phone: +374-93 37-60-23;
Email: info@esfarmenia.org

«Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն» (CQS) մեթոդի կիրառմամբ:

7. Խորհրդատու ընկերությունները կարող են համագործակցել միմյանց հետ՝ իրենց որակավորումը բարձրացնելու նպատակով: Այս դեպքում անհրաժեշտ է հստակ նշել համագործակցության ձևը՝ **Համատեղ ձեռնարկատիրական գործունեություն (ՀՁԳ) և/կամ ենթախորհրդատու:** Պայմանագրի ողջ իրականացման ընթացքում ՀՁԳ բոլոր անդամները համապարտ պատասխանատվություն են կրում, եթե վերջիններս ընտրվեն:

8. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ստորև նշված հասցեով աշխատանքային օրերին՝ 09:00-ից մինչև 18:00 ընկած ժամանակահատվածում: Ստորև բերված են կոնտակտային տվյալները:

9. Հետաքրքրության հայտը պետք է ներկայացվի **հայերեն**, էլեկտրոնային տարբերակով՝ ստորև նշված հասցեով, ոչ ուշ քան **2025թ-ի նոյեմբերի 11-ը, ժամը 15:00:** Հետաքրքրության հայտում պետք է հստակ նշված լինի **ք.Տաշիրում Տաշիր գետի վրա քաղաքային կամրջային անցման վիճակի հետազննում;** ***GIZ/ESF/CS/CQS - 2025/001***

Վերոնշյալ հասցեն է՝
Պատվիրատու՝ Էներգախնայողության Աջակցության Հիմնադրամ
Լիազորված ներկայացուցիչ՝ տկն. Աստղինե Պասոյան, Գործադիր տնօրեն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 26/1 Վազգեն Սարգսյան պող., Էրեբունի բիզնես կենտրոն 4-րդ հարկ, 414 սենյակ
Հեռ.՝ +374-93 37-60-23;
Էլ. փոստ՝ info@esfarmenia.org

Sincerely,
Astghine Pasoyan
Executive director

Հարգանքով՝
Աստղինե Պասոյան
Գործադիր տնօրեն

Co-funded by the European Union

Supported by: Federal Ministry for the Environment, Nature Conservation, Nuclear Safety and Consumer Protection — based on a decision of the German Bundestag

IKI INTERNATIONAL CLIMATE INITIATIVE

Implemented by giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

OECD

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՔՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Annex A
Terms of Reference (ToR)
Investigation of the condition of the urban bridge crossing over the Tashir River in Tashir city

Introduction

The Energy Saving Foundation has received a grant from the German Agency for International Cooperation (GIZ) under the program "Promoting Green Deal Readiness in the Eastern Partnership Countries (ProGRess)", co-financed by the Federal Ministry for the Environment, Nature Conservation and Nuclear Safety of Germany and the European Commission, to cover the expenses of the "Tashir – Climate Bridge" project, and a portion of these funds is intended to be allocated for the procurement of the present consultancy services. The project is implemented by the Energy Saving Foundation (the Client).

Consultancy services (the Services) include the investigation of the condition of the urban bridge crossing over the Tashir River in Tashir city, **Lori region**.

The bridge crossing is located in Tashir city, over the Tashir River, at the intersection of A. Jahukyan and Getapnya Streets. The bridge has a total length of 29 meters, a width of 22 meters, and a height of 4 meters. The bridge was constructed in 1967 and is a prefabricated reinforced concrete structure with a traffic capacity of 90–110 TM (ton meter) per hour and a load-bearing capacity of 60 tons.

Purpose of the assignment

The technical inspection of the bridge crossing shall be carried out in accordance with the requirements of the construction norms RACN 32-

Հավելված Ա
Տեխնիկական առաջադրանք
ք.Տաշիրում Տաշիր գետի վրա քաղաքային կամրջային անցման վիճակի հետազննման համար

Ներածություն

Էներգախնայողության աջակցման հիմնադրամը դրամաշնորհ է ստացել Գերմանական միջազգային համագործակցության ընկերության՝ GIZ-ի կողմից՝ «Արևելյան գործընկերության երկրներում Կանաչ համաձայնագրի իրագործման պատրաստվածության խթանում» (ProGRess) ծրագրի շրջանակներում, որը համաֆինանսավորվում է Գերմանիայի Բնապահպանության, բնության պահպանության և միջուկային անվտանգության դաշնային նախարարության և Եվրոպական հանձնաժողովի կողմից՝ «Տաշիր – կլիմայական կամուրջ» ծրագրի ծախսերը հոգալու համար և նպատակ ունի միջոցների մի մասն ուղղել սույն խորհրդատվական ծառայությունների ձեռքբերմանը: **Ծրագիրն իրականացվում է Էներգախնայողության աջակցման հիմնադրամի** կողմից (Պատվիրատու):

Խորհրդատվական ծառայությունները (Ծառայություններ) ներառում են՝ **Լոռու մարզի** ք.Տաշիրում, Տաշիր գետի վրա քաղաքային կամրջային անցման վիճակի հետազննում**:**

Կամրջային անցումը գտնվում է ք.Տաշիրում, Տաշիր գետի վրա՝ Ա. Ջահուկյանի և Գետափնյա փողոցների փողոցի հատման հատվածում: Կամրջի ընդհանուր երկարությունը կազմում է 29 մ, լայնությունը 22 մ, բարձրությունը՝ 4մ: Կամուրջը կառուցվել է 1967թ,-ին, երկաթբետոնյա, հավաքովի, թողունակությունը 90-110ՏՄ/ ժամ, բեռնակրությունը 60տ:

Առաջադրանքի նպատակը

Կամրջային անցման տեխնիկական զննումը պետք է իրականացվի ՀՀՇՆ 32-03.03-2024 «Կամուրջներ և խողովակներ. Հետազննության և փորձարկման կանոններ» շինարարական նորմերի պահանջների համաձայն:

03.03-2024 “Bridges and Culverts: Rules for Investigation and Testing.”

The present Terms of Reference envisages technical investigation of the current condition of the bridge and provision of conclusion on the following:

- Actual technical condition and bearing capacity of bridge structures,
- To present technically and economically justified proposals for the further operation of the bridge on possible solutions for the repair or reconstruction of its structures.

The following work shall be carried out during the investigation:

1. Geometric measurement of the bridge crossing, preparation of longitudinal, cross-sectional, and layout plan (on geodetic projection).
2. Visual and instrumental inspection of the bridge (determination of actual concrete strength using non-destructive methods).
3. Verify the presence of utility networks and, if present, describe their type and locations.
4. Determination of the bridge’s actual load-bearing capacity using analytical methods.
5. Assessment of the bridge’s seismic resistance level .
6. As a result of the visual and instrumental examination and calculations, the class of the technical condition of the bridge shall be determined.
7. As a result of the carried out work, a detailed bridge crossing investigation report shall be developed, which shall include:

- Detailed description of bridge crossing structure,
- Detailed description of current condition of the bridge crossing,

Համաձայն սույն տեխնիկական առաջադրանքի անհրաժեշտ է կատարել կամրջի ներկայիս տեխնիկական հետազննումը, որի ընթացքում պետք է որոշել՝

- Կամրջի կոնստրուկցիաների փաստացի տեխնիկական վիճակը և կրողունակությունը,
- Ներկայացնել կամրջի հետագա շահագործման նպատակով տեխնիկապես և տնտեսապես հիմնավորված առաջարկներ, նրա կոնստրուկցիաների վերանորոգման կամ վերակառուցման հնարավոր լուծումների վերաբերյալ:

Հետազննման ընթացքում պետք է իրականացվեն հետևյալ աշխատանքները՝

1. Կամրջային անցման երկրաչափական չափագրում, երկայնական, լայնական կտրվածքների, հատակագծի կազմում (գեոդեզիական հանույթի վրա):
2. Կամրջի ակնադիտական ու գործիքային հետազննում (բետոնի փաստացի ամրության որոշում ոչ քայքայող եղանակների կիրառմամբ):
3. Ճշտել ինժեներական ցանցերի առկայությունը և նրանց առկա լինելու դեպքում նկարագրել դրանց բնույթն և տեղադրման դիրքերը:
4. Կամրջի փաստացի բեռնատարության որոշում անալիտիկ եղանակներով:
5. Կամրջի սեյսմադիմացկունության աստիճանի գնահատում:
6. Կատարված ակնադիտական ու գործիքային հետազննման, հաշվարկների արդյունքում պետք է որոշվի կամրջի տեխնիկական վիճակի կարգը:
7. Կատարված աշխատանքների արդյունքում պետք է մշակվի կամրջային անցման հետազնման մանրամասն հաշվետվություն, որը պետք է ընդգրկի՝

- կամրջային անցման կոնստրուկցիայի մանրամասն նկարագրություն,

- Determination of the class of technical condition of the bridge crossing,
- Conclusion on technical condition of the bridge,
- The load-bearing capacity of the bridge span structure with appropriate calculations,
- The bridge's seismic resistance level with appropriate calculations,
- Photos,
- "As-built" dimensional drawings, indicating all damages, cracks, and deformations,
- Suggestions on possible repair or reconstruction solutions for bridge structures for future operation,
- Requirements for regulatory processes regarding project expertise, licensing, and technical supervision.

Following conditions shall be taken into account when performing the work:

- Technical data and drawings regarding the bridge have not been preserved,
- Considering that the banks of the Tashir River in the bridge section are regulated by walls, appropriate auxiliary equipment (stairs, etc.) should be used to approach and measure the bridge elements (span beams, supports, support platforms, etc.), temporary traffic organization shall be organized, and work in the water environment shall be done, if necessary.

Requirements for the organization:

- կամրջային անցման ներկայիս տեխնիկական վիճակի նկարագրություն,
- կամրջային անցման տեխնիկական վիճակի կարգի որոշում,
- կամրջի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն,
- կամրջի թռիչքային կառուցվածքի բեռնունակության աստիճանը համապատասխան հաշվարկներով,
- կամրջի սեյսմադիմացկանության աստիճանը համապատասխան հաշվարկներով,
- լուսանկարներ,
- "as-built" չափագրման գծագրեր, բոլոր վնասվածքների, ճաքերի և դեֆորմացիաների նշագրմամբ,
- հետագա շահագործման նպատակով կամրջի կոնստրուկցիաների հնարավոր վերանորոգման կամ վերակառուցման լուծումների վերաբերյալ առաջարկություններ,
- Նորմատիվային գործընթացների պահանջները՝ նախագծերի փորձաքննության, լիցենզավորման և տեխնիկական հսկողության մասով:

Աշխատանքները կատարելիս պետք է հաշվի առնել հետևյալ պայմանները՝

- կամուրջի վերաբերյալ տեխնիկական տվյալներ, գծագրեր չեն պահպանվել,
- հաշվի առնելով, որ կամրջի հատվածում Տաշիր գետի ափերը կարգավորված են պատերով, կամուրջների տարրերին (թռիչքային կառուցվածքի հեծաններ, հենարաններ, հենարանային հարթակներ և այլն) մոտեցման և նրանց չափագրման նպատակով պետք է կիրառվի համապատասխան օժանդակ սարքավորումներ (աստիճաններ և այլն), երթևեկության ժամանակավոր կազմակերպում, անհրաժեշտության դեպքում՝ աշխատանքներ ջրային միջավայրում:

The organization shall have Licenses:

- Survey and investigation services of urban development facilities, Survey and passporting of the technical condition of buildings and structures, category I

Qualification of the consultant's specialists

The organization's staff must include the following necessary specialists at a minimum in accordance with the requirements listed below:

No	Proposed position	Minimum experience /year /	Education	Professional field knowledge
1	Team Lead, Design Engineer	10	Bachelor's or Master's degree	Design Engineer

The organization's staff shall include at least one specialist who has the qualification of RA "B" highest class licensed structural engineer, with at a minimum of ten years of experience.

The organization must have carried out technical investigation of at least 3 bridges (passage, overpass) in the past five years; copies of contracts (excluding the financial part) or handover and acceptance acts must be submitted.

If necessary, the organization shall submit to the Client at least one copy of the report on the previously performed work.

Deadlines

The duration of the performance of services is 6-8 weeks, of which:

1) Preparation - 1 week,
2) Field work - 2 weeks,

Կազմակերպությանը ներկայացվող պահանջներ՝

Կազմակերպությունը պետք է ունենա լիցենզիաներ՝

- Քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայություններ, Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն և անձնագրավորում ներդիր, I կարգ

Խորհրդատուի մասնագետների որակավորումը

Կազմակերպության աշխատակազմում պետք է ընդգրկված լինեն առնվազն հետևյալ անհրաժեշտ մասնագետները համապատասխան ստորև նշված պահանջներին՝

Հ/h	Առաջարկվող պաշտոնը	Նվազագույն փորձառություն /տարի /	Կրթությունն	Մասնագիտական ոլորտի գիտելիքներ
1	Խմբի ղեկավար,ճարտարագետ-կոնստրուկտոր	10	Բակալավրի կամ մագիստրոսի աստիճան	ճարտարագետ-կոնստրուկտոր

Կազմակերպության աշխատակազմում պետք է ընդգրկված լինի առնվազն մեկ մասնագետ, որը ունենա ՀՀ «Բ» բարձրագույն դասի արտոնագրված ճարտարագետ-կոնստրուկտորի որակավորում, առնվազն տասը տարվա փորձառությամբ:
Կազմակերպությունը վերջին հինգ տարվա ընթացքում պետք է կատարած լինի առնվազն 3 կամրջի (ուղեանցի, էստակադայի) տեխնիկական հետազննման աշխատանքներ, պետք է ներկայացվեն պայմանագրերի պատճեներ (բացի պայմանագրի ֆինանսական մասի) կամ հանձման-ընդունման ակտեր:
Անհրաժեշտության դեպքում կազմակերպությունը պետք է ներկայացնի պատվիրատուին նրա կողմից նվազագույնը 1 հատ կատարված աշխատանքի հաշվետվության պատճեն:

Ժամկետներ

Աշխատանքների մատուցման տևողությունը կազմում է 6-8 շաբաթ, որից.

1. նախապատրաստում՝ 1 շաբաթ,

3) Investigation - 2–3 weeks,
4) Calculations and preparation of the report - 1–2 weeks.

Consultant reporting obligations

As a result of the completed work, a detailed report on the investigation of the bridge crossing shall be developed, which shall include recommendations for possible solutions for the possible repair or reconstruction of its structures for further operation.

The report shall include:

- Investigation program with methodology and a matrix of invesstigation (subject to approval).
- Field notes and photo catalog with a damage map.
- Report on structural analysis, including model description, verification of limit states, and seismic calculations.
- Options for technical solutions for reinforecement, with preliminary schemes and technical and economic justification.
- Work prioritization and phased organization plan with operational risk management.
- Regulatory compliance references to the requirements of RACN 32-03.03-2024.

The Consultant shall submit to the Client reports on all works and activities specified in the Terms of Reference. Upon acceptance of the reports by the Client in the manner specified by the latter, the reports shall serve as the basis for payment.

The Consultant shall submit an inception report within the first week after signing the contract, which shall include work implementation plan, specifying the planned actions, deadlines, responsible persons, and information on the involved partners.

2. դաշտային աշխատանքներ՝ 2 շաբաթ,
3. հետազննություն՝ 2–3 շաբաթ,
4. հաշվարկներ և հաշվետվության պատրաստում՝ 1–2 շաբաթ:

Խորհրդատուի հաշվետվություններ ներկայացնելու պարտավորությունները

Կատարված աշխատանքների արդյունքում պետք է մշակվի կամրջային անցման հետազնման մանրամասն հաշվետվություն, որը պետք է ընդգրկի հետագա շահագործման նպատակով նրա կոնստրուկցիաների հնարավոր վերանորոգման կամ վերակառուցման հնարավոր լուծումների առաջարկություններ: Հաշվետվությունը պետք է ներառի.

- Հետազոտության ծրագիր՝ մեթոդաբանությամբ և հետազննությունների մատրիցով (հաստատման ենթակա):
- Դաշտային արձանագրություններ և ֆոտոցուցակ՝ վնասվածքների քարտեզով:
- Հաշվետվություն կառուցվածքային վերլուծության մասին՝ մոդելի նկարագրությամբ, սահմանային վիճակների ստուգումներով, սեյսմիկ հաշվարկով:
- Ամրացման տեխնիկական լուծումների տարբերակներ՝ նախնական սխեմաներով, տեխնիկա-տնտեսական հիմնավորմամբ:
- Աշխատանքների առաջնահերթության և փուլային կազմակերպման պլան՝ շահագործման ռիսկերի կառավարմամբ:
- Նորմատիվային համապատասխանության հղումներ՝ ՀՀՇՆ 32-03.03-2024 պահանջներին:

Խորհրդատուն պետք է Պատվիրատուին ներկայացնի Տեխնիկական Առաջադրանքով սահմանված բոլոր աշխատանքների և գործողությունների վերաբերյալ Հաշվետվություններ: Պատվիրատուի կողմից սահմանված կարգով Հաշվետվությունների ընդունումից հետո դրանք կծառայեն որպես հիմք վճարման համար:

In addition to the above mentioned report, the Consultant shall also submit a final report.

The reports shall be submitted in the Armenian and English languages, in three hard copies, as well as in electronic form.

Payment Terms

Payments to the Consultant shall be made upon the Client's approval of the acceptance act and the corresponding invoice submitted by the Consultant. The payment shall be disbursed in two installments: 20 (twenty) % as an advance payment and 80 (eighty) % upon final acceptance of the deliverables.

The proposed price shall be exclusive of VAT. The Consultant will be provided with a VAT exemption certificate following the settlement of the invoice.

Խորհրդատուն պայմանագրի ստորագրումից հետո առաջին շաբաթվա ընթացքում պետք է ներկայացնի մեկնարկային հաշվետվությունը, որը կներառի աշխատանքների իրականացման ծրագիրը՝ նախատեսված գործողությունների մասով աշխատանքային պլանը, ժամկետները, պատասխանատուները և ներգրավվող գործընկերների վերաբերյալ տեղեկատվություն:
Վերոնշյալ հաշվետվությունից բացի Խորհրդատուն պետք է ներկայացնի նաև վերջնական հաշվետվություն:
Հաշվետվությունները պետք է ներկայացվեն հայերեն և անգլերեն լեզուներով, թղթային երեք օրինակից, ինչպես նաև էլեկտրոնային տարբերակով:

Վճարման պայմաններ

Վճարումները Խորհրդատուին կկատարվեն Պատվիրատուի կողմից ընդունման ակտի և Խորհրդատուի ներկայացրած հաշիվ-ապրանքագրի հաստատումից հետո: Վճարումը կիրականացվի երկու փուլով՝ 20 (քսան) %՝ որպես նախավճար, և 80 (ութսուն) %՝ վերջնական աշխատանքների ընդունումից հետո:
Առաջարկվող գինը պետք է լինի ԱԱՀ-ից ազատված: Խորհրդատուին կտրամադրվի ԱԱՀ-ից ազատման տեղեկանք՝ հաշիվ-ապրանքագրի վճարումից հետո:

Co-funded by the European Union

Supported by: Federal Ministry for the Environment, Nature Conservation, Nuclear Safety and Consumer Protection — based on a decision of the German Bundestag

IKI INTERNATIONAL CLIMATE INITIATIVE

Implemented by giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

OECD

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԿԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Annex B
Consultant's experience

Timeframe	Task title/and brief description of key deliverables/outputs	Name of the client and country of execution of the task	Approximate total price of the contract / amount paid to your company	Functions within the task
{example: January 2019 —April 2020}	*{example:«..... quality amelioration», a rationalization plan was developed for the .....}*	*{example:..... ministry, country}*	*{example: 1,5 mln AMD/1,0 mln AMD}*	*{example` Lead organization A&B&C in Consortium/JEA}*
{example` January – May 2022}	*{example` «..... support to the territorial administration», on drafting of by-laws concerning ...}*	*{example: ..... municipal administration, country}*	*{example` 2,2 mln AMD/2,2 mln AMD}*	*{example: sole consultant}*

<u>Հավելված Բ</u>

<u>Խորհրդատուի փորձը</u>

Ժամկետները	Առաջադրանքի անվանումը/և հիմնական արդյունքների/արտադրանքի համառոտ նկարագիրը	Պատվիրատուի և առաջադրանքի կատարման երկրի անվանումը	Պայմանագրի մոտավոր ընդհանուր արժեքը / Ձեր ընկերությանը վճարված գումարը	Առաջադրանքի շրջանակներում գործառույթները
{օրինակ՝ 2019 թ. հունվար — 2020 թ. ապրիլ}	*{օրինակ՝«..... որակի բարձրացում»՝ մշակվել է .....-ի ռացիոնալացման ամփոփ պլան}*	*{օրինակ՝..... նախարարություն, երկիր}*	*{օրինակ՝ 1,5 մլն ՀՀԴ/1,0 մլն ՀՀԴ}*	*{օրինակ՝ Կոնսորցիումի/ՀԶԳ-ի կազմում առաջատար մասնակից A&B&C}*
{օրինակ՝ 2022 թ. հունվար-մայիս}	*{օրինակ՝ «..... տարածքային վարչակազմին աջակցում»՝ ..... վերաբերյալ ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում}*	*{օրինակ՝ ..... քաղաքի վարչակազմ, երկիր}*	*{օրինակ՝ 2,2 մլն ՀՀԴ/2,2 մլն ՀՀԴ}*	*{օրինակ՝ միանձնյա խորհրդատու}*